# 2016 թվականի գործունեության տարեկան

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2016 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից իրականացված աշխատանքների հիմնական նպատակն եղել է ԼՂՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և ԼՂՀ կառավարության ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտների գծով գերակա խնդիրների կատարման ապահովումը:

Վարչության համակարգում կատարված աշխատանքներն՝ ըստ առանձին ծրագրերի և ոլորտների բնութագրվում են հետևյալ հիմնական ցուցանիշներով.

**Օրենսդրություն**

2016 թվականի օրենսդրական դաշտի բարելավման, ինչպես նաև ընդերքօգտագործման և բնապահպանական ոլորտը կանոնակարգելու նպատակով ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից մշակվել են միշարք իրավական ակտեր`

- ✓ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որով սահմանվել են բնապահպանական վճարի դրույքաչափեր և հաշվարկման կարգ, մասնավորապես`

օդայինավազան արտանետված մթնոլորտային օդն աղտոտող բոլոր նյութերի համար,

ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցների վնասակար նյութերի արտանետման դիմաց`

ըստ դրանց խմբերի և ենթախմբերի,

ջրային ավազան փաստացի արտանետված բոլոր վնասակար նյութերի և միացությունների համար,

շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված արգելված տեղադրման (պահման) համար հատուկ հատկացված տեղերում, ինչպես նաև արդյունաբերական հրապարակներում թափոնների տեղադրման (պահման) համար` ըստ վտանգավորության և պահման ժամկետի,

- ✓ «Թափոնների մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների փաթեթը, որով հստակեցվել է վտանգավոր թափոններ առաջացնողների կողմից թափոնների անձնագրերի, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրային գրանցման հաշվետվության և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման թերթիկի ներկայացման հետ կապված իրավահարաբերությունները,

օրենքներում օգտագործվող որոշ հասկացությունների սահմանումները,

ինչպես նաև օրենքով կարգավորման ենթակա թափոնների տեսակների շրջանակը.

- ✓ «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որով կարգավորում է հասարակության էկոլոգիական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, իրավական և կազմակերպական հիմքերը:

- ✓ 2016 թվականին մշակվել և հաստատվել են ԼՂՀ կառավարության 11 որոշում, 3 գերատեսչական ակտ:

**<u>Ընդերքօգտագործում</u>**

Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ ստանալու հայտերը, որի արդյունքում տրամադրվել է 12 օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն:

Դադարեցվել են 5 ընդերքօգտագործման թույլտվություն:

2016 թվականի ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով երկարաձգվել են 2 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետները, վերաձևակերպվել 5 ընդերքօգտագործման թույլտվություններ:

2016 թվականին Վարչության կողմից ընդերքի օգտագործման համար գանձված պետական տուրքերի և տույժերի գումարը կազմել է 37 698 550 ՀՀ դրամ, որը մուտքագրվել է ԼՂՀ պետական բյուջե:

***<u>Բնապահպանական փորձաքննություն</u>***

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումները քննարկելուց և ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունը ստուգելուց հետո կնքվել են պայմանագրեր, և օրենքով սահմանված կարգով իրականացվել են համապատասխան փորձաքննություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել նախատեսվող գործունեությունների ծրագրեր՝36 հայտ, որոնցից 26-ին տրվել է դրական եզրակացություն, 10 հայտ, որոնք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ ենթակա չէին բնապահպանական փորձաքննության, նույնպես բավարարվել է:

Բնապահպանական փորձաքննությունների դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 3062800 ՀՀ դրամ:

2016 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2015 թվականին կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | 2016թվական | | 2015թվական | |
|---|---|---|---|---|---|
| | | Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը | Գումարը (հազ. դրամ) | Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը | Գումարը (հազ. դրամ) |
| 1 | Բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ | 36 | * | 57 | * |
| 2 | Կնքվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ | 26 | 3062.8 | 39 | 4170.6 |
| Ընդամենը՝ | | x | 3062.8 | x | 4170.6 |

***<u>Պետական ընդերքաբանական փորձաքննություններ</u>***

Պետական ընդերքաբանական փորձաքնություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված

դիմումների հիման վրա իրականացվել է ոչ մետաղական օգտակար հանածոների պաշարների հաստատման 12 ընդերքաբանական փորձաքննություն:

***Ծառահատումների թույլտվություններ***

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 52 դիմումների հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ և համապատասխան քննարկումների արդյունքում տրամադրվել` 45 թույլտվություն: 7 դիմում մերժվել է, ծառահատումների պայմանները իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

2016 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը պակասել է 12-ով:

***Որսի թույլտվություններ***

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում` որսորդներին և ձկնորսներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել են 217 թույլտվություններ, այդ թվում` 199-ը սիրողական որսի, իսկ 18-ը` ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 779100 դրամ:

Այս ոլորտի աշխատանքները կատարվել են տարվա որսաշրջանի ընթացքում և վերահսկվել են:

2016 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2015 թվականի ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | 2016թվական | | 2015թվական | |
|---|---|---|---|---|---|
| | | Քանակը | Գումարը (հազ. դրամ) | Քանակը | Գումարը (հազ. դրամ) |
| 1 | Կենդանատեսակների որսի քանակ | 805 հատ | 638,6 | 815 հատ | 1010.1 |
| 2 | Ցանցով ձկնորսություն | 2650 կգ | 107,5 | 1200կգ | 36.0 |
| 3 | Թառփով ձկնորսություն | 1100 կգ | 33,0 | 2700կգ | 81.0 |
| Ընդամենը` մուտքագրվել է պետբյուջե | | x | 779,1 | x | 1127.1 |

***Ջրային ռեսուրսներ***

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված հայտերի հիման վրա, ԼՂՀ Ջրային օրենսգրքի պահանջներին ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման նպատակով, տեղում ուսումնասիրվել է 17 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել 15 ջրօգտագործման թույլտվություններ: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց ԼՂՀ պետբյուջե է մուտքագրվել 141 000 դրամ:

2016 թվականին ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման քանակը 2015 թվականի համեմատ նվազել է 14-ով, երկարաձգումների քանակը կազմել է 14հատ, մուտքերը պետական բյուջե 2015 թվականի համեմատ չեն ավելացել:

***Հողերի կառավարում***

ԼՂՀ շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ,իսկ բնապահպանական փորձաքննություն իրականացնելուց հետո տրամադրվել են 32 դիմումի հողոտեսքերի փոփոխության գրավոր համաձայնություններ` դրանց փոփոխման վերաբերյալ: ԼՂՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի <<Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման կարգը սահմանելու մասին>> N85 որոշման պահանջներին չհամապատասխանող 2 դիմումները մերժվել են:

Բնապահպանական և բնօ**գտագործման վճարների ոլորտում`**

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվություն են ներկայացրել 99 հիմնարկ-ձեռնարկություն: Տնտեսվարողսուբյեկտներիկողմիցպետբյուջեէփոխանցվել 510 878 411 ՀՀ դրամ բնօգտագործման և 37 563 578ՀՀ դրամ բնապահպանական վճարներ:

**Տեսչական վերահսկողական աշխատանքներ**

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից կատարվել են 15 ստուգայցեր` ըստ <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ԼՂՀ օրենքի 22-րդ, 24-26-րդ հոդվածների պահանջների:

Բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 67 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց հաշվարկված վնասի չափը կազմել է 38238900 ՀՀ դրամ, իսկ վարչական տուգանքը` 1010 000 ՀՀ դրամ:

**Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում`**

- Ապօրինի ծառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 13 իրավախախտում:

1. Կազմված 13 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 7 006500ՀՀ դրամ, կամավոր չմուծված 6 870 700 ՀՀ դրամի գանձումը ընթացքի մեջ է.

2.Կազմված 13 արձանագրություններից ԼՂՀ ոստիկանություն է ուղարկվել 7 վարույթ՝ 4 884 000ՀՀ դրամի չափով.

3. Վարչական պատասխանատվության է երթարկվել 2 քաղաքացի ՝ 100 000 ՀՀ դրամի չափով,չմուծված 50 000ՀՀ դրամի գանձումը ընթացքի մեջ է:

- Ապօրինի անտառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 29 իրավախախտում, որոնք կատարվել են 40 քաղաքացիների կողմից:

1. Կազմված 29 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 30 151 400ՀՀ դրամ, 1 249 300 ՀՀ դրամ մուծվել է պետբյուջե, չմուծված 28 902 100 ՀՀ դրամը ընթացքի մեջ է գանձելու նպատակով:

2. Ոստիկանություն է ուղարկվել 20 վարույթ՝ 28975500 ՀՀ դրամի չափով.

3. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 66-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 12 քաղաքացի՝ 600000ՀՀ դրամի չափով, նշված գումարից 450 000 ՀՀ դրամը կամավոր չվճարելու պատճառով՝ վարույթները ուղարկվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գանձելու նպատակով:

- Ապօրինի որսորդության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 10իրավախախտում, որոնք կատարվել է 10քաղաքացիների կողմից:

1. Կազմված 10 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 721 000 ՀՀ դրամ, նշված գումարից 205 000 ՀՀ դրամը կամավոր չվճարելու պատճառով՝ վարույթները ուղարկվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գանձելու նպատակով:

2. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 88-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 3 քաղաքացի՝ 210 000 ՀՀ դրամի չափով, նշված գումարից 70 000 ՀՀ դրամը կամավոր չվճարելու պատճառով՝ վարույթները ուղարկվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գանձելու նպատակով:

- Ապօրինի ձկնորսության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 8 իրավախախտում, որը կատարվել է 8 քաղաքացու կողմից:

1. Կազմված 8 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 360 000 ՀՀ դրամ, նշված գումարից 342 000 ՀՀ դրամը կամավոր չվճարելու պատճառով՝ վարույթները ուղարկվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գանձելու նպատակով.

2. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 89-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 քաղաքացի՝ 50 000 դրամի չափով, որը ընթացքի մեջ է գանձելու նպատակով:

- Վտանգավոր նյութերի, արտադրական և սպառման թափոնների ոլորտում հայտնաբերվել և արձանագրվել է 1 իրավախախտում: ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 85-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 քաղաքացի՝ 50 000 ՀՀ դրամի չափով, նշված գումարը կամավոր չվճարելու պատճառով՝ վարույթը ուղարկվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գանձելու նպատակով:
- Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում ստուգվել է 5 կազմակերպություն, իրավախախտում չի հայտնաբերվել և արձանագրությունները ընդունվել են ի գիտություն:

**«Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.**

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2016 թվականի համար հաստատված 11 500խտացված մ$^3$ գործափայտի և 150 000 խտացված մ$^3$ վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին տրամադրված թույլտվությունների հիման վրա <<Արցախանտառ>> ՊՈԱԿ-ի և անտառօգտագործողների միջև կնքվել են բնափայտի մթերման պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է`

- 10 772 մ3 խտացված գործափայտ
- 63 938խտացված մ3 վառելափայտ
- թափուկից 10542 դարսված մ3 վառելափայտ:

2016 թվականին «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կազմել է 203 981 600 ՀՀ դրամ, որը ֆինանսավորվել է պետբյուջեից, կազմակերպության հաստիքների քանակը կազմել է 200 հաստիք:

**Վարչարարական գործունեություն և գործավարություն**

**Բյուջետային միջոցների հաշվին համակարգի պահպանման ծախսեր**

*(հազ. դրամ)*

| Տարի | Նախահաշվային | Ֆինանսավորում | Մնացորդ |
|---|---|---|---|
| 2014թ. | 117348,7 | 105012,0 | 12336,7 |
| 2015թ | 163021,5 | 146986,5 | 16035,0 |
| 2016թ. | 152740,0 | 146497,0 | 6243,0 |

**Վարչարարական գործունեությունը բնութագրող ցուցանիշներ**

| Տարի | Աշխատողներիմիջին ցուցակային թիվը | Ավտոմեքենաներիքանակըտարեվերջին |
|---|---|---|
| 2014թ. | 44 | 4 |
| 2015թ | 48 | 3 |
| 2016թ. | 48 | 3 |

Ընդհանուր առմամբ 2016 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ մուտքագրվել է իրավաբանական անձանցից և քաղաքացիներից, պետական մարմիններից և նրանց ենթակա կազմակերպություններից 3471 մտից փաստաթուղթ,ել քագրվել` 3552 գրություն: